

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/2

12 փետրվարի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Արմեն Սահակյանի 04.02.2013թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 22.01.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 212974 որոշման դեմ:

Ա/Ձ Արմեն Սահակյանի բողոքում մասնավորապես նշված է.

16.01.2013թ. «Կ վարչական դատարան է բողոքարկվել «ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ-ի կողմից կազմված 23.11.2012 թ-ի թիվ 2108913 ակտը: Վերջինիս հիման վրա ընդունվել է թիվ 212974 վաչական ակտը, համաձայն որի «Կ ՎԻՎ օրենսգրքի 169 հոդվածի 1-ին կետի հիմքով ենթարկվել եմ վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Կ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, ...»: Վերոգրյալից հետևում է, որ 23.11.2012թ-ի թիվ 2108913 ակտը սահմանված ժամկետում բողոքարկված լինելու պարագայում թիվ 212974 վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման: Բացի այդ, այն անվավեր է նաև նշված օրենքի 55-րդ հոդվածով սահմանված վարչական ակտին ներկայացվող պահանջներին չբավարարելու հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը Ա/Ձ Արմեն Սահակյանը խնդրում է վերացնել «ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ կողմից կազմված 22.01.2013 թ-ի թիվ 212974 ակտը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ռուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 15.11.2012թ-ի թիվ 2108913 հանձնարարագրի, Ա/Ձ Արմեն Սահակյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 23.11.2012թ-ին կազմվել է թիվ 2108913 ստուգման ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից և քննելով 15.01.2013թ-ի թիվ 720 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, «ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետը 22.01.2013թ-ին կայացրել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 212974 որոշումը, որով կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Կ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 25.000 դրամ:

Ա/Ձ Արմեն Սահակյանի 04.02.2013թ-ի բողոքում բերված այն պնդման վերաբերյալ, որ 23.11.2012թ-ի թիվ 2108913 ստուգման ակտը սահմանված ժամկետում բողոքարկված լինելու պարագայում թիվ 212974 վարչական ակտը (Աշտարակի ՏՀՏ պետի 22.01.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 212974 որոշումը) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Կ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն ենթակա է անվավեր ճանաչման, նշվեց հետևյալը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Կ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, ...»:

Իր հերթին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Կ օրենքի 70-րդ հոդվածի համաձայն.

1. Ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:
2. Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունված ա) վարչական մարմին.

բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին>:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտի բողոքարկումը դատարան չի կարող համարվել ակտի բողոքարկում վարչական կարգով: Այսինքն, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը քննարկվող դեպքում կիրառելի չէ:

Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետը, ղեկավարվելով <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 244.2-րդ հոդվածի դրույթներով, քննելով 15.01.2013թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 720 արձանագրությունը և կից նյութերը 22.01.2013թ-ին կայացրել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 212974 որոշումը, որը բավարարում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պահանջների:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Մերժել Ա/Ձ Արմեն Սահակյանի 04.02.2012թ-ի բողոքը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 22.01.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 212974 որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ՔԱՐՍԵՂՅԱՆ

